«ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԱՎԱՐՏԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՁՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Սառը պատերազմի» տարիներին Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը հիմնվում էր Արևմուտքի հետ քաղաքական և ռազմական դաշինքի ամրապնդման, ինչպես նաև կայացած սահմանների ճանաչման և ստատուս-քվոյի պահպանման սկզբունքների վրա: Այն ժամանակ Թուրքիայի քաղաքական վերնախավը գիտակցում էր, որ հնարավոր չէ այլևս վերակագնել օսմանյան կայսրության փլատակները և պետք է փոխել երկրի զարգացման մոդելը:

Ազգայնակության աթաթուրքական մոդելը հենվում էր ոչ թե էթնիկ, կամ թուրքերի բացառիկության, այլ Թուրքիայի Հանրապետության սահմաններում բնակվող բազմազգ ժողովուրդներից նոր ազգի ստեղծման գաղափարների վրա: Դրանից է բխում Աթաթուրքի «Երջանիկ է նա, ով իրեն թուրք է անվանում» կարգախոսը: Արտաքին քաղաքականության հիմքում ընկած էր «Տանը խաղաղություն, խաղաղություն աշխարհում» կարգախոսը: Գործնականում դրանից բխում էր, որ Թուրքիան մի պետություն է, որի հոգսերն ու նպատակներն ուղղված են դեպի երկրի ներսը և նա չի հավակնում այլ ժողովուրդների տարածքներին: Սա պաշտոնապես նշանակում էր, որ Թուրքիան հրաժարվում էր Կովկասի և Կենտրոնական Ասիայի նկատմամբ իր նախկին զավթողական նկրտումներից[1]:

1980-ական թվականների վերջերին եվրասիական տարածաշրջանում ընթացող գործընթացների արդյունքում Թուրքիան կրկին հայտնվեց գլոբալ քաղաքականության կենտրոնում:

«Սառը պատերազմի» ավարտից հետո Թուրքիայի հյուսիս-արևելյան սահմանների երկարությամբ նոր ինքնիշխան պետությունների հանդես գալը կրկին ուժեղացրեց Թուրքիայի դիրքերը, միաժամանակ նրա համար ստեղծելով և բարենպաստ պայմաններ, և հնարավոր բարդություններ: ԽՍՀՄ-ի փլուզումը, քաղաքական և հասարակական փոփոխությունները Արևելյան Եվրոպայում ու հետխորհրդային տարածքում, էթնիկ հակամարտությունները Բալկաններում և Կովկասում՝ արմատական ձևով փոփոխեցին Թուրքիայի

[1] Коджаман Омер. Южный Кавказ в политике Турции и Росии в постсоветский перюд. М., 2004, էջ 80

հարակից շրջանների աշխարհաքաղաքական պատկերը: Ստեղծված իրավիճակը օբյեկտիվորեն ուժեղացնում էր Թուրքիայի դիրքերը տարածաշրջանում:

Թուրքիայի առջև ծառացան միանգամայն նոր հիմնախնդիրներ, քանի որ այն ժամանակ աշխարհում ընթացող գործընթացներին զուգահեռ իրեն զգացնել էր տալիս նաև ներքին տնտեսական, էթնիկ և կրոնական բնույթի հիմնախնդիրները:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիան փոփոխություններ կատարեց արտաքին քաղաքականության մի քանի հիմնարար սկզբունքներում, որոնք հռչակվել էին դեռևս հանրապետության ստեղծման սկզբում: Մի շարք ուսումնասիրողների կարծիքով Թուրքիան, ձգտելով իր տեղը գտնել միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգում, կիրառում էր «ակտիվության նոր ձև», որը բնութագրվում է «արիության և զգուշության» համատեղմամբ[2]:

Եվ իսկապես, թուրքական արտաքին քաղաքականությունը 1990-ական թվականներին, ի համեմատություն նախորդ շրջանի, Մերձավոր Արևելքում, Բալկաններում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում դարձավ առավել ակտիվ և վստահ: 1990-ական թվականների սկզբին Թուրքիան իրեն համարում էր որպես Եվրոպայում (Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի նորանկախ պետություններում) Արևմուտքի քաղաքականության կարգավորող:

Թուրքական արտաքին քաղաքականության ակտիվացմանը նպաստեց նաև Հարավային Կովկասում և Կենտրանական Ասիայում թուրքերի հետ պատմական, կրոնական, էթնիկ, մշակութային և լեզվական առումով մոտ երկրների առաջացումը, որոնք ունեն օգտակար հանածոների հսկայական պաշարներ և սպառման շուկաներ: «Սառը պատերազմի» շրջանում շփումը ԽՍՀՄ թուրքալեզու ժողովուրդների հետ հասցված էր նվազագույնի, քանի որ Մոսկվան զգուշանում էր պանթուրքական գաղափարների տարածվելուց, իսկ Անկարան այն ժամանակ հետևում էր Աթաթուրքի այն գաղափարին, որ թուրքական ազգին պատկանում է միայն պետական սահմանների ներսում գտնվող տարածքը:

Իրավիճակը փոխվեց XXդ. 90-ական թվականներին, երբ տարածաշրջանային հիմնախնդիրների առաջացման հետ մեկտեղ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը դարձավ առավել ակտիվ: Նախորդ շրջանի հետ համեմատած մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ Թուրքիայի կառավարող շրջանների վրա մեծացավ հասարակական կարծիքի ազդեցությունը և այն իր արտացոլումն է ստանում որոշումների կայացման գործընթա-

---

[2] Sayaris.Turkish foreign policy in the post-cold war era: hte Challenges of the multi-regionalism // J. of international affairs.-N.Y.2000.-Vol.54,N1, էջ 170

ցում: Եթե «սառը պատերազմի» շրջանում Թուրքիայի դերը հիմնականում Արևմուտքի կողմից ԽՍՀՄ-ի նկատմամբ կիրառվող զսպման քաղաքականությանը աջակցելն էր, ապա նոր շրջանում արտաքին քաղաքականությունը դարձավ բազմերանգ:

Այսօր կարելի է լուրջ չընդունել Թուրքիայի ազգայնական շրջանների այն պնդումները, որ Թուրքիայի կենսական շահերը տարածվում են Բալկաններից մինչև Չինաստան (Ծանոթություն Թյուրքերը իրենց տարածվածության տեսանկյունից աշխարհում գրավում են 5-րդ տեղը, իսկ Բալկաններից մինչև Չինաստան ապրում է մոտ 160 մլն թյուրք) և գերագնահատել նրա դերը նորանկախ թյուրքալեզու պետություններում, սակայն բացահայտ է, որ Թուրքիան արագ արձագանքում է տարածաշրջանում ընթացող իրադարձություններին: Այս հանգամանքը նաև զգալի չափով բացատրվում է ձևավորված հասարակական կարծիքի ներգործությամբ:

Քանակական և որակական զարգացում են ապրել լոբբիստական խմբավորումները, որոնք ձևավորվել են ազգային հատկանիշներով (ադրբեջանական, բոսնիացիների, աբխազների և այլն): Աճող թուրքական ազգայնականության արդյունքում Թուրքիան գործում է լայն ընդգրկմամբ Գերմանիայում բնակվող թուրքերի շահերը պաշտպանելուց մինչև Անդրկովկասում ակտիվ դիվանագիտական գործունեություն: Թյուրքալեզու երկրների ղեկավարների առաջին իսկ հանդիպման ժամանակ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը հայտարարեց, որ XXI դարը կդառնա թուրքերի դարաշրջան, իսկ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելը (1993թ., մայիս-2000թ. մայիս-Թուրքիայի նախագահ) 1992թ. ապրիլին գտնվելով Ուզբեկստանում նշեց, որ ինքը գտնվում է թուրքերի հնագույն հողում[3]: Միաժամանակ Թուրքիայի պետական գործիչների ճնշող մեծամասնությունը հասկանում է, որ մոտ ապագայում թյուրք ժողովուրդների միավորումը իրական չէ, քանի որ թյուրքական աշխարհի առաջնորդի դերի հավակնություններն անհամապատասխան էին իրենց երկրի պետական և տնտեսական ռեսուրսներին, իսկ նորանկախ թուրքալեզու հանրապետությունների ազգային էլիտաները Թուրքիայի հետ հարաբերություններում աշխատում են առավելագույնս օգտվել միաժամանակ չզոհաբերելով իրենց պետական շահերը, էթնիկ ինքնությունը, ինքնիշխանությունը, Արևմուտքի և հատկապես Ռուսաստանի հետ հարաբերությունները: Այս առումով հատկանշական է հենց Ս. Դեմիրելի 1990թ. մարտի վերջերին արտահայտած այն միտքը, որ լինելով թուրք հնարավոր չէ հրաժարվել պանթուրքիզմից, սակայն չպետք է դուրս գալ բանականության ու իրականության սահմաններից, որ արկածախնդրություն է ձգտել համախմբել թյուրքական աշխարհը մեկ պետությունում: Եթե

[3] Турция между Европой и Азией. М,2001, էջ 427

ապագայում ստեղծվի թյուրքական պետությունների միություն, ապա դրան ոչ ոք դեմ չէ, իսկ այսօր այն ֆանտազիա է: Իսկ Թուրքիայի ժողովրդական սոցիալ-դեմոկրատական կուսակցության գլխավոր նախագահ, այն ժամանակ փոխվարչապետ է. Ինենյուի կարծիքով այլ երկրներում բնակվող թուրքերի խնդիրների նկատմամբ ուշադրությունը և մշակութային մերձեցումը պանթուրքիզմ չէ[4]:

Ստեղծված նոր իրավիճակում թուրքական իշխանությունները որոշեցին, որ չեն կարող հետևել նախկինում վարած տարածաշրջանային խնդիրներին չմիջամտելու քաղաքականությանը: Թուրքիան 1991թ. դեկտեմբերի 9-ին առաջինը ճանաչեց Ադրբեջանի անկախությունը, իսկ մյուս հանրապետություններինը՝ դեկտեմբերի 16-ին: Բացի Հայաստանից, մյուս հանրապետությունների հետ Թուրքիան հանդես եկավ դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործում որպես նախաձեռնող կողմ և իր դեսպանությունները բացեց այդ երկրներում: 1991թ. վերջերին Թուրքիան վերջնականապես հրաժարվեց տարածաշրջանում Մոսկվայի հետ համաձայնեցված քաղաքականությունից և ակտիվորեն անմիջական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց հետխորհրդային հանրապետությունների հետ: Մեկ տարվա ընթացքում Կովկաս և Կենտրոնական Ասիա այցելեց ավելի քան 1170 թուրքական պատվիրակություն[5]: 1992թ. հոկտեմբերին Ստամբուլում բացվեց թյուրքական երկրների գագաթաժողովը: Այդ երկրների միջև ստեղծվեց օդային և արբայնակային ուղիղ կապ: Նույն թվականին Անկարայում ստեղծվեց Միջազգային համագործակցության գծով թյուրքական գործակալությունը[6]: Չանտեսելով քաղաքական և տնտեսական իր շահերը, Արևմուտքը այդ հարցում ևս խրախուսում էր Թուրքիային մի շարք պատճառներով.

Առաջին, թուրքական մոդելը նրանց կողմից դիտվում էր որպես այլընտրանքային՝ հեղափոխական արաբական ազգայնականության և ագրեսիվ մահմեդական արմատականության առկայության պայմաններում:

Երկրորդ, Թուրքիայի ազդեցության մեծացումը նվազեցնում էր հետագայում Մոսկվայի փորձերի արդյունավետությունը Անդրկովկասը և Միջին Ասիան կրկին ամբողջությամբ իր ազդեցության գոտի դարձնելու փորձերը:

Երրորդ, իր բարդ հարաբերությունները Եվրամիության հետ Թուրքիան փորձում էր փոխհատուցել՝ ընդլայնելով իր ազդեցությունը տարածաշրջանում և դառնալով յուրօրինակ «կամուրջ» Եվրոպայի համար: 1989թ. ԵՄ մերժել էր Թուրքիայի առաջարկությունը անդամակցելու այդ կառույցին և Անկարան

---

[4] Նույն տեղում, էջ 427
[5] Connections.The Quarterly journal. v. I, N3, 2002, էջ 52
[6] Նույն տեղում

զգուշանում էր, որ Եվրոպան այլևս նրա կարիքը չի զգում հետխորհրդային շրջանում:

Թուրքական հասարակությունում աստիճանաբար նվազում է Եվրոպականացման գաղափարների կողմնակիցների թիվը: Եթե 2004թ-ին այդ գաղափարը պաշտպանում էին Թուրքիայի բնակչության 67 տոկոսը, ապա 2006թ-ին 1/3-ը: Բոսֆորի համալսարանի հետազոտական կենտրոնի տվյալներով 1999թ-ին թուրքերի շրջանում անցկացված հարցումների արդյունքում 36%-ը պատասխանել է, որ իրեն զգում է «նախ և առաջ մահմեդական», իսկ 2004թ նման պատասխան է տվել հարցվածների 45 տոկոսը[7]:

Չորրորդ, Թուրքիայի զարգացող տնտեսությունը կարիք ունի էներգակիրների, որոնցով հարուստ են կասպիական և կենտրոնական Ասիայի երկրները: Թուրքիան հնարավորություն ստացավ դրանք ներկրել շրջանցելով ռուսական և իրանական ուղիները: Ստեղծված իրավիճակը բացառում է Թուրքիայի միջազգային մեկուսացումը և ունի նաև որոշակի հոգեբանական գործոնի դեր քանի որ Թուրքիան երկար ժամանակ իրեն «օտար» էր զգում Եվրոպական միջավայրում, իսկ նոր «եղբայրների» ձեռքբերումը, որոնք որոշ հույսեր են կապում և հավատում «մեծ եղբորը» նոր ոգևորություն է առաջ բերել: Անկարայում:

Թուրքական քաղաքական գործիչները և Արևմուտքի նրանց ռազմակիցները հասկանում էին, որ Թուրքիան ի վիճակի չէ տնտեսական առումով միայնակ յուրացնել այդ հսկայական նոր շուկաները: 1995թ Թուրքիայի պետական պարտքը կազմում էր 70 մլրդ դոլար, որի տարեկան սպասարկման համար անհրաժեշտ էր 6 մլրդ դոլար: Ծանր տնտեսական վիճակը արդյունք էր աճող ռազմական ծախսերի, քրդերի դեմ մղվող և Պարսից ծոցում ծավալված ռազմական գործողությունների[8]:

1990 թվականից արտադրանքի աճը նվազեց և 6-ից հասավ 1 տոկոսի: 2001թ. ԱՀԱ-ն կրճատվել էր 9 տոկոսով, գործազրկությունը կազմում էր մոտ 17 տոկոս: ՆԱՏՕ-ի երկրներից Թուրքիան միակ երկիրն էր, որ կտրուկ ավելացրեց իր ռազմական ծախսերը: Ձենք ներմուծող երկրների ցանկում զբաղեցնելով երկրորդ տեղը, նա 1987թ. ռազմական ծախսերը 3,9 մլրդ դոլարից 1997թ-ին այն հասցրեց 7,6 մլրդի: Մոտակա 30 տարիների ընթացքում նախատեսվում է այն հասցնել 150 մլրդ դոլարի[9]: Այդ իսկ պատճառով տարածաշրջանում իր քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու համար Թուրքիան դիմեց ԱՄՆ-ի, ԵՄ, Ճապոնիայի ֆինանսական օգնությանը:

---

[7] Власть, аналитический еженедельник, N 49 (763), 11.12.2006, էջ 50-51

[8] Бузов В.И. Новейшая история стран Азии и Африки (1945-2004), Ростов н/Д., 2005, էջ 232

[9] Заргарян Р.А. Доктрина геополитики современной Восточно-средиземноморской цивилизации. СПБ, 2004, էջ 18-19

Նախագահ Ս. Դեմիրելի նածաձեռնությամբ 1993թ. հոկտեմբերի 25-ին Թուրքիայի ԱԳՆ, ֆինանսների նախարարության, Միջազգային համագործակցության և մի շարք այլ գերատեսչությունների մասնակցությամբ հրավիրվեց խորհրդակցություն, որտեղ քննարկվեց թուրքալեզու երկրներում և համայնքներում Թուրքիայի քաղաքականության հիմնական ուղղությունները և հեռանկարները:

Մինչ այդ Թուրքիան Կենտրոնական Ասիայում արդեն իրականացրել էր 675 մլն դոլարի կապիտալ ներդրումներ, իսկ տեխնիկական և հումանիտար օգնության հետ այն կազմում էր 1,2 մլրդ դոլար[10]: 1994թ. հունվարի դրությամբ Թուրքիան Արբեջանի և Միջին Ասիայի հանրապետություններին տվել էր 2 մլրդ դոլարի վարկ, ստորագրել մոտ 200 համաձայնագրեր, այդ երկրներում աշխատում էին մոտ 1500 թուրք ձեռներեցներ, որոնք կնքել էին 2,5 մլրդ դոլարի պայմանագրեր[11]:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը, կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները:

ԽՍՀՄ-ի փլուզումը ավելի շատ դրական, քան բացասական ազդեցություն ունեցավ Թուրքիայի համար: Չնայած տարածաշրջանում առկա որոշակի լարվածությանը, վերացավ Թուրքիայի համար խորհրդային (ռուսական) վտանգը, եվրասիական տարածաշրջանում Թուրքիան գործունեության առավել լայն հնարավորություններ ստացավ:

Թուրքիայի արտաքին քաղաքականությունում տեղի ունեցան մի շարք տեղաշարժեր: Բալկանների և Մերձավոր Արևելքի տարածաշրջանների հետ մեկտեղ Անկարան առավել կենտրոնացնում է իր ուշադրությունը Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի վրա: Չնայած Թուրքիան ժխտում է իր մտադրությունները տարածաշրջանում առկա հակամարտություններին ռազմական միջամտությանը, այնուամենայնիվ, դեպքերի հնարավոր զարգացման տարբերակ է, որ թուրքական զինված ուժերը կողմերից որևէ մեկի պահանջով մուտք գործեն տարածաշրջան որպես «խաղաղասիրական ուժեր»: Բացի ռազմավարական տեսանկյունից, Անդրկովկասը թուրք գործարարների համար նաև հսկայական չյուրացված շուկա է, ինչպես նաև ամենահարմար տարանցիկ ուղին դեպի Կենտրոնական Ասիա: Այդ իսկ պատճառով Թուրքիան աշխատում է տարածաշրջանում ստեղծել իրենից կախյալ տնտեսական գոտի: Այդ նպատակին հասնելու գլխավոր խոչընդոտը չկարգավորված հայ-թուրքական հարաբերություններն ու ղարաբաղյան հակամարտությունն է:

---

[10] Турция между Европой и Азией, էջ 430
[11] Նույն տեղում, էջ 431